1637·

Կատարեցաւ Պրակք Առաքելոցս ձեռամբ Անտոն կրօնաւոր քահանայի, ի թվին ՌՁԵ, յունիս 1, օրն Դշ չորեքշաբթի։ Զմեղապարտ և զանպիտան գրիչս Անտոն կրօնաւոր՝ աղաչեմ յիշել ի Տէր Աստուած՝ միով Տէր ողորմեայիւ. և Աստուած զյիշողդ յիշէ. ևն։ [Մայր Ժամագիրք]։

1638·

Քրիստոս Աստուած, ողորմեա ստացողի գրոցս Տէր Զաքարիայ Լովայ քաղաքի աւագիրեցուն, և ծնողաց նորին՝ Տէր Գասպարին՝ յուսով վերափոխեցելոյն, և ամենայն արեան մերձաւորաց նորին, կենդանեաց և հանգուցելոց. և ինձ մեղապարտ գրչիս Մկրտչիս՝ Ղազարի որդոյն, և ծնողաց իմոց։ Գրեցաւ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի թվ. ՌՁՁ. յունվար Ը։

Վասն չարչարանաց քոց, Քրիստոս Աստուած մեր, ազատեա ի չարչարանաց աստեացս՝ չար մարդոյ անօրէն Նիկոլ չեպիսկոպոսէ, և ի հանդերձելումն ի հրոյն յաւիտենից՝ զՏէր Զաքարիաս։..

Ով հարք պատուականք և եղբարք նազելիք, հանդիպողք այսմ ոգենուագ սուրբ տառիս՝ որ ասի Ճառընտիր, յիշեցէք ի Քրիստոս զմեծափափաղ ստացող սորա զՏէր Զաքարիա Լովայ աւագերէցն, որդի Տէր Գասպար աւագերիցուն. որ ետ գրել զայս սուրբ տառս մեծաւ տենչմամբ և եռանդնասէր սրտիւ. որ հանդիպեցաւ սորին օրինակի ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ առաքելոյն, և ետ օրինակել յիշատակ իւր և նախնեաց իւրոց։... [Ճառընտիր ի Ս. Ղազար]։

1638-9·

Գրեցաւ սա (Մաշտոց) ձեռամբ յոգնամեղ Յակոբ իրիցուս, ի յերկիրս Իլախաց, ի քաղաքս Զամօսցա, առ դրունս Ս. Աստուածածնին. ի թվաբերութեան Հայոց ՌՁԷ ամի, ի ժամանակս թագաւորութեան Իլախաց Դ Վլատիսլաւին, և Հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Տէր Փիլիպպոս կաթողիկոսին։.. Ի վայելումն անդրանիկ որդւոյ իմոյ Տէր Պետրոս քահանային. զոր արտասուաթոր մաղթանօք յԱստուծոյ ամենակալէ, զի բարով վայելել տացէ ի ժամանակս յերկարս ի խորութիւն ծերութեան։.. Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն տէր քաղաքիս՝ Բան Թումաս Ծամօյսքին, այր հանճարեղ և իմաստուն. Աստուած լուսաւորէ զիւր հոգին. ամէն։ [Ի կայսեր. գրատան Վիեննայ]։

1639·

Գրեցաւ և աւարտեցաւ այս Աղօթամատոյցս ի քաղաքն Սէջով, ընդ հովանեաւ Ս. Սիմէոնի եկեղեցւոյն, ձեռամբ Անտոն կրօնաւորի՝ Իրքոյի որդ-